


# *Ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում բնապահպանական խնդիրների վերաբերյալ գործող իրավական ակտերի ժողովածու*

| | |
|---|---|
| *Երկիր.* | Հայաստանի Հանրապետություն |
| *Պատվիրատու* | Համաշխարհային Բանկ, Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ ՊՀ |
| *Ժամկետները* | 2004թ. – 2005թ. |



***Տեխնիկական առաջադրանք***

Ուսումնասիրել և հավաքագրել Հայաստանում գործող բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են շրջակա միջավայրի պահպանությանը և օգտագործվում են նախագծման, շինարարության, շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման ժամանակ:

*Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը*

Ժողովածուն կազմելու նպատակով.

- ուսումնասիրվել, հավաքագրվել և վերլուծվել են ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում գործող օրենսդրական, նորմատիվային և մեթոդական փաստաթղթերը,
- ուսումնասիրված փաստաթղթերից դուրս են բերվել շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող հոդվածներն ու հատվածները և վեր են ածվել համակարգչային տարբերակի,
- Համաշխարհային Բանկի կողմից ընդունված միջազգային փաստաթղթերը թարգմանվել են հայերեն և զետեղվել են ժողովածուի մեջ,
- պատրաստվել է ժողովածուի նախնական տարբերակը և կազմակերպվել են հասարակական լսումներ,
- ժողովածուն լրամշակվել, խմբագրվել և տպագրվել է 500 օրինակով,
- կազմակերպվել է ժողովածուի շնորհանդես և այն բաժանվել է շահագրգիռներին:




*Աշխատանքի նպատակն է.*

Մեկ ժողովածուի մեջ ամփոփել ոռոգման, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում գործող օրենսդրական, մեթոդական և նորմատիվային փաստաթղթերի շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող պահանջներն ու ցուցումները և հրատարակել այդ ժողովածուն: